Արեստակես Ս. Սիմավորյան[1]

ԷՐԴՈՂԱՆԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՄ ԱԶԿ-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ[2]

(Գերմանական մամուլի արձագանքները)

2024 թ. հունվարին հայտնի դարձավ, որ Գերմանիայում թուրքական համայնքը հիմնում է նոր քաղաքական կազմավորում, որը կոչվում է «Ժողովրդավարական դաշինք հանուն բազմազանության (կամ հավասարության) և զարթոնքի» (հապավումը՝ *«DAVA»*):

Ինչպես հաղորդում է *«BILD»-ը*, *«DAVA»-ի* չորս առաջատար թեկնածուներն են՝

- Համբուրգից՝ **Մուստաֆա Յոլդաշը**, որը Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից գրանցված է որպես «ՀԱՄԱՍ» կազմակերպության կողմնակից,

- **Ալի Իսան Ունլուն**՝ Ներքին Սաքսոնիայից, տեղական *«DITIB»-ի (Կրոնական հարցերով թուրք-իսլամական միություն)*՝ Թուրքիայի կրոնական գործերի գործակալության անմիջական հսկողության տակ գտնվող կազմակերպության անդամ,

- փաստաբան, Հայոց ցեղասպանությունը ժխտող **Ֆաթիհ Զինգալը**՝ Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիայից, ով նախկինում Սոցիալ-դեմոկրատական կուսակցության (SPD) անդամ էր, և այն թողեց՝ Եվրոպայում Արդարություն և զարգացում կուսակցության (AKP) քաղաքականությունն առաջ մղելու նպատակով, և

- ինքնահռչակ իրավապաշտպան **Թեյֆիկ Օզջանը,** ով՝ *«DAVA»-ի* ղեկավարն է[3]:

Վերջիններիս բնորոշմամբ՝ *«DAVA»-ի* նպատակն է դառնալ «*նոր քաղաքական կենտրոն բազմաթիվ քաղաքացիների համար, ովքեր ներկայացված չեն գործող կուսակցություններում և հաստատակամորեն հավատարիմ են քաղաքական մասնակցությանը*»: Գաղափարախոսական տեսանկյունից այն համարվում է իսլամական-պահպանողական քաղաքական կազմավորում: Սակայն, նրանց հիմնական

---

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում՝ որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014-2021 թթ.-ին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում՝ որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել 02.02.2024 թ.:

[3] Jetztkommt die Erdogan-Partei. 28.01.2024, https://www.bild.de/politik/inland/politik-inland/es-geht-ihr-um-mehr-macht-in-deutschland-jetzt-kommt-die-erdogan-partei-86935048.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

ցանկությունը Եվրախորհրդարանում հայտնվելն է (*ընտրությունները տեղի են ունենալու 2024 թ. հունիսի 9-ին*):

ԳԴՀ քաղաքական տարբեր գործիչներ և փորձագետներ հանդես եկան քննադատությամբ՝ մեղադրելով *«DAVA»-ին*՝ Թուրքիայի կառավարության և իշխող կուսակցության հետ ունեցած սերտ կապերի համար: Գերմանիայում արդեն օրեր շարունակ քննարկում են Էրդողանի նոր «կուսակցության» հարցը, և ըստ որոշ կարծիքների՝ ԹՀ նախագահ Ռ. Թ. Էրդողանը կարող է օգտագործել *«DAVA»-ն*՝ ուժեղացնելու իր ազդեցությունը Գերմանիայում և Եվրոպայում:

«DAVA»-ի գլխավոր չորս անդամները այս կամ այն կերպ կապված են Էրդողանի հետ և նախկինում բազմիցս մեծ ջանքեր են գործադրել՝ պաշտպանելու վերջինիս քննադատներից[4]: *«BILD»*-ի գլխավոր խմբագիր Մարիոն Հորնի բնութագրմամբ *«DAVA»-ի* ղեկավար կազմի անդամներից մեկը *«ՀԱՄԱՍ»-ի ընկերն է, մյուսները՝ «DITIB»-ի պաշտոնյա և «ԱՁԿ»-ի լոբբիստ, իսկ «DAVA»-ի նախագահը, զարմանալիորեն, Էրդողանի բացահայտ երկրպագու է»*[5]: Նրա կարծիքով Գերմանիային պետք չեն քաղաքական գործիչներ, **որոնք փոքրիկ Էրդողաններ են և, ըստ էության, այլ պետության ավտոկրատ տիրակալի ազդեցության գործակալներ:**

Համաձայն Միգրացիայի և անվտանգության հարցերով փորձագետ Քրիստոֆ դե Վրիեսի՝ «DAVA»-ն ունի հստակ ռազմավարություն. *«Մահմեդականներին պատկերել որպես ռասիստական մեծամասնության հասարակության զոհեր և հանդես գալ որպես նրանց շահերի պաշտպաններ: Կարծում եմ, որ հրատապ է, որ մեր անվտանգության մարմինները ուշադիր հետևեն այս կուսակցության գործունեությանը և դրա կապերին թուրքական կառավարության հետ և միջամտեն, եթե թուրքական կառավարությունը ուղղակի ազդեցություն գործադրի»*[6]*:*

Ներքին գործերի նախարար Նենսի Ֆեզերը նույնիսկ զգուշացրեց Էրդողանին, որ Գերմանիայում ընտրությունների վրա դրսից ազդելու ցանկացած փորձ չի հանդուրժվի:

Ակնհայտ է, որ միգրանտները, որոնք երկար ժամանակ թուրքական պետության համար դիտվում էին միայն իբրև փողի աղբյուր, Էրդողանի օրոք վերածվել են նաև քաղաքական ռեսուրսի՝ թե՛ ներքին, և թե՛ արտաքին ճակատներում: Թուրքիան միշտ էլ ակնկալիքներ է ունեցել եվրոպական իր համայնքներից՝ կապված ԵՄ անդամակցության գործընթացի, Կիպրոսյան և Քրդական հարցերի, Հայոց ցեղասպանության հետ: Այդ

[4] Faeserwarnt Erdogan. 30.01.2024, https://www.bild.de/politik/inland/politik-inland/nach-dava-gruendung-nancy-faeser-warnt-erdogan-vor-wahl-einmischung-86971032.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

[5] Ich brauche in Deutschland keine Politiker, die kleine Erdogans sind. 27.01.2024, https://www.bild.de/politik/kolumnen/kolumne/man-braucht-in-deutschland-keine-politiker-die-kleine-erdogans-sind-86934294.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

[6] Jetztkommt die Erdogan-Partei. 28.01.2024, https://www.bild.de/politik/inland/politik-inland/es-geht-ihr-um-mehr-macht-in-deutschland-jetzt-kommt-die-erdogan-partei-86935048.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

ուղղությամբ աշխատանքները պետական մակարդակով իրականացնում են թուրքական համայնքի կրոնա-մշակութային, քաղաքական (թուրքական) կուսակցություններն ու, նույնիսկ, գործարար միությունները: Պատահական չէ, որ իրենց դիրքերն ամրապնդելու, Եվրոպայում քաղաքական հենարան ունենալու նպատակով «ԱԶԿ»-ն դեռևս 2004 թ. էր Գերմանիայում հիմնադրել «Եվրոպայի թուրք դեմոկրատների միություն» *(Union of European Turkish Democrats-UETD)* կազմակերպությունը, որը թուրքերով բնակեցված եվրոպական երկրներում ունի 10-ից ավելի մասնաճյուղ և հանդիսանում է «ԱԶԿ»-ի աջ ձեռքը Եվրոպայում: Նրա մասնաճյուղերի կողմից Գերմանիայում անցկացվող միջոցառումները երբևէ չեն անցել առանց «ԱԶԿ» պատգամավորների, անգամ՝ թուրք նախարարների մասնակցության: Այժմ, ինչպես տեսնում ենք, ի լրումն *«DİTİB»*-ի և «Եվրոպայի թուրք դեմոկրատների միության», որոնք ազդեցության գործիքներ են Էրդողանի համար, վերջինս Գերմանիայի թուրքական սփյուռքի՝ իրեն հավատարիմ ներկայացուցիչների մասնակցությամբ և ղեկավարությամբ ստեղծում է նոր քաղաքական միավորում՝ ի դեմս *«DAVA»-ի:*

Հետևաբար, թե անվտանգության, թե՛ քաղաքականության առումով Գերմանիայի տարբեր քաղաքական շրջանակների կողմից անհանգստությունն ու մտահոգությունները անտեղի չեն: Օրինակ՝ Քրիստոֆ դե Վրիեսը, ով *«DAVA»-ն* սահմանում է՝ որպես «*թուրք-իսլամական կուսակցություն*», առաջարկում է, որ «*Գերմանիայի անվտանգության ստորաբաժանումները անպայման վերահսկեն այս կուսակցությունը*»[7]: Ինչ վերաբերում է քաղաքականությանը՝ տեսակետներ են հնչում, որ *«DAVA»-ն* կարող է փոխել ոչ միայն Գերմանիայի, այլև՝ Եվրոպայի քաղաքական դաշտը և ի զորու է ուժեղացնել «ԱԶԿ» խմբավորումը Եվրախորհրդարանում՝ դառնալով Էրդողանի խոսափողը Եվրոպայում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Faeserwarnt Erdogan. 30.01.2024, https://www.bild.de/politik/inland/politik-inland/nach-dava-gruendung-nancy-faeser-warnt-erdogan-vor-wahl-einmischung-86971032.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

2. Ich brauche in Deutschland keine Politiker, die kleine Erdogans sind. 27.01.2024, https://www.bild.de/politik/kolumnen/kolumne/man-braucht-in-deutschland-keine-politiker-die-kleine-erdogans-sind-86934294.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

3. Jetztkommt die Erdogan-Partei. 28.01.2024, https://www.bild.de/politik/inland/politik-inland/es-geht-ihr-um-mehr-macht-in-deutschland-jetzt-kommt-die-erdogan-partei-86935048.bild.html (բեռնման օրը՝ 01.02.2024).

[7] Նույն տեղում: